# Ուրվածեր Իրանահայության Պատմության

## 4-Իրանահայերի մասնակցությունը Իրանի պետական կյանքում

## • Հայերը Իրանական բանակում

- Հայերը Իրանում եղել են դեռեւս մ.թ.ա. 6-րդ դարից: Դրանք հիմնականում հայկական զորամասեր էին, որոնք վասալական պարտավորություն էին կատարում՝ ծառայելով Աքեմենյան պետականությանը:Ստորեւ համարոտ ներկայասնում ենք հայոց դերը իրանական բանակում.
- Հայ զորավար Դաղարշիշի հրամանատարությամբ
- Շահ Աբբաս մեծի օրոք հայերը չաՓազանց նշանակալից դեր են ունեցել երկրի քաղաքական եւ զինվորական կյանքում, նրանցից կարելի է հիշել մի կանիսին: Շահը դավանաՓոխ քրիստոնյաներից ստեղծում է 15,000 հոգանոց հեծելազոր, որի կարեւորագույն մասն էին կազմում հայերը:
- Ալլահվերդի խան
- Էմամ-Ղուլի խան
- Դավութ խան
- Մյուս հայազգի գործիչներից էր երեւանցի Ղարչղայ խան Ղոլլար-Աղասին: :
- ՅուսեՖ խան
- Նադիր Շահ ԱՖշարը (1688-1747թթ.) մի խումբ հայերի, հակառակ իրենց կամքի, գաղթեցրեց Խորասան նահանգը, որպեսզի աջակցեն այդ շրջանի առեւտրի զարգացմանը:Նա մի խումբ հայեր ներգրավեց իր բանակում

- Հայաստեր Քարիմ խան Զանդից (1699-1779) հետո Աղա Մահմեդ խան Ղաջարն (1742-97թթ.) է գահակալում, սա եւս իր բանակում ուներ մեծ թվով հայեր, որոնք գլխավորապես ծառայում էին որպես թնդանոտաձիգներ
- Ղաջարների հարստության տիրապետության նախնական ժամանակաշրջանում, նրանց ծառայել են բազմաթիվ հայեր, որոնց ներկայացնում են ստորեւ.
- Գեներալ Դավիթ խան Սագինյանը Ֆաթալիշահ թագավորի ժամանակ Իրանի զորաբաժանումների հրամանատարն էր Ֆարս եւ Սպահան նահանգներում:[10]
- Խողադաղ-խան Էրմենին (1781-1847), 1831-ից ստացել է խանության տիտղոս, դարձել Խոյի, Արդաբիլի, Ուրմիայի, Քերմանշահ եւ Իրաքի հրամանատար, 1844 թ. Թավրիզի կուսակալ
- Յուսուֆ խան (Ծատուր կամ Մինաս Մայինյանց): Ծնվել է 1781-82-ին Թիֆլիսում:1792 թ. գերեվարվել է պարսիկների կողմից, եղել է պետական գործիչ, սպարապետ եւ Ֆաթալիշահի խորհրդականը: Նա գաղտնի պահել է քրիստոնեությունը:Մահացել է 1824-ին: Մահից հետո սպարապետության պաշտոնն անցել է որդուն՝ Կուլամ-Հուսեյնին
- Կուլամ Հուսեյն խանը Ֆաթալիշահի եւ հայուհի Խորիշանի (Շահի 57-րդ կնոջ) դստեր՝ Մահ-բեգումի ամուսինը, եղել է Իրաքի մարզպանի տեղապահ, 1824-ից սպարապետ

- Մուսիս խան (18-րդ դ. երկրորդ կես-1820 կամ 1821), ռազմական գործիչ, թնդանոթաձիգների գլխավոր հրամանատար, ծառայել է Աղա Մահմեդ խանի եւ Ֆաթալիշահի ժամանակ, մասնակցել է բազմաթիվ ×ակատամարտերի, թաղված է Ղազվինի հայոց եկեղեցու բակում
- Յուսուֆ խան Ամիր Թո÷խանե Գոլոյենց (§Ամիր Թո÷խանե» նշանակում է թնդանոթաձիգների գլխավոր հրամանատար, ծն. 1783-85) ռազմական գործիչ, 19-րդ դարի Իրանի պատմության ականավոր դեմքերից էր
- Յուսուֆ խան, թնդանոթաձիգ, ծնվել է Թիֆլիսում, արցախցիների ընտանիքում:
- Մանուչար խան Էնոկոլոպյան-Մամիկոնյան (Շամս-օլ-դոլե).
- Սողոմոն խան Էնոկոլոպյան (Սահամոլդովլե).
- Աղալար բեկ Էնիկոլոպյան
- Նարիման խան Էնոկոլոպյան (Ղավամոսալթանե՝ պետության նեցուկ)
- Ջահանգիր խան Էնոկոլոպյան-Մամիկոնյան.
- Հովհաննես խան Ագչալյան (Մանի-օլսալթանե), ծնվել է 1833թ.:
- Սողոմոն Միմոնյան (Սոլեյման խան), Գեներալ Սողոմոն Սիմոնյանը Ծնվել է 1858թ.,
- Եփրեմ խան Դավթյան (Ասիրբեկյան). ծնվել  է 1868 թ. Գանձակում
- Ամիր Թուման Մարտիրոս խան, Կոզակների զորամասերի շտաբի պետ
- Գնդապետ Գրիգոր Սաղյանը (Գնդապետ Գիգո)ծ ն.է 1876 թ. հունիսի  9-ին

- Աբրահամ խան Հովակիմյան (1877-1963)
- Պետրոս խան Մելիք Անդրեասյանը (1879-1912)
- Գնդապետ Գրիշ(ա) խան Դանիելյան
- Գնդապետ Սմբատ Եղիազարյանը ծնվել է 1888թ. Հայաստանում
- Լեյտենանտ Մկրտիչ խան Դավիթխանյան, գեներալ Սարգիս խանի զավակը ծնվել է 1902թ. Նոր Ջուղա
- Գեներալ Լեւոն Վարդանի: Ծնվել է 1906 թ. Թեհրանում
- Զորիկ Սոլխանյան, ծնվել է 1925 թ.
- Գնդապետ Էմիլ Հակոբյանը ծնվել է 1928 թ. Թավրիզում
- Ծովակալ Սիրուս Եղիազարյանը ծնվել է 1931թ. Թավրիզում:
- Գնդապետ դոկտոր Ռուբեն Շահումյան, Իրանի բանակի բժշկական բաժանմունքների բժիշկ
- Գնդապետ դոկտոր Վարդան բեկ-Խանյանը Իրանի բանակի բժշկական բաժանմունքների բժիշկ
- Հարություն Թահմազյանը (Թովմասյան) ծնվել է 1939թ. Նոր Ջուղա (Իրան)
- Գնդապետ Արտեմ (Արտիմ), Մելիքյանը ծնվել է 1947թ. Սպահանում (Իրան)

Շահ Աբբասը բոլոր դեսպանական այցերին եւրոպական եւ արեւելյան երկրներ, օգտագործում էր հայերին: Օրինակ Նոր Ջուղայի քալանթարներ Խոջա Նազար եվ Խոջա Սաֆրազը Թագավորի խորհրդականներն էին: Նա հաճախ հայերից էր ընտրում իր դեսպաններին, օրինակ, Հակոբ Մարգարյան Ամեդեցի (1547 թ.), առեւտրական դեսպաններ ջուղայեցիներ Մարտիրոս, Տեր-Գաբրիել եւ Գալաբեկ; Խոջա Սաֆարը Շահի դեսպանն էր Վենետիկում (1610 թ.), եւ Յաղուբը (Հակոբ) Լեհաստանում ու Գերմանիայում (1616 թ.), իսկ Շահ Սեֆին 1640 թ. Միրզա Մուսաբեգ անունով մի հայի Վարշավա է ուղարկում:

Ղաջարների ժամանակ. Մարգար խան Դավիթխանյան, Ֆաթալի շահի գործակալը 1804-1848 թթ., Միր Դավիթ Մելիք Շահնազարյան Իրանի դեսպանը Փարիզում (1816), Դավիթ խան Դավթյանը Իրանի հյուպատոս Զմյուռնիայում, Վիեննայում եւ Պետերբուրգում, Ժան Դավութ խան (Հովհաննես Դավթյան) դիվանագետ, Սեթ խան Աստվածատրյանը Իրանի հատուկ պատվիրակ Լոնդոնում եւ Թուրքիայում, Աղազար խան Էնոկոլոպյան, Իրանի Հյուպատոս Թիֆլիսում, Վանում, Կարինում, Հին ՛այազետում եւ այլուր, Նարիման Խան Էնոկոլոպյան, Իրանի դեսպանի խորհրդական Կ. Պոլսում, հյուպտոս Եգիպտոսում եւ դեսպան Վիեննայում, Միրզա Մելքոմ խան, Իրանի դեսպանը Լոնդոնում մինչեւ 1889թ., ՛երլինի վեհաժողովի մասնակիցներից, Հովհաննես խան Մասեհյան, դիվանագետ եւ Իրանի դեսպան Լոնդոնում (1927) եւ Ճապոնիայում (1929) եւ շատ այլ քաղաքական այրեր:





Հայաստան Համահայկական
հիմնադրամի նամակը
իրանահայության

# Հարցեր, տեսակետներ